

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարազգաբազմի գիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маск“

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւնն Հայոց թատրոնի
Նամակ խմբագրին: Ներքին լուրերը — Արտա-
քին տեսութիւնն: Վարդերի դարեղարձը:
Անգլիա: Արտաքին լուրերը — Մշակիչ հեռա-
գիրները: — Յայտարարութիւնները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՔԱՍՏՐՈՆ

Հինգշաբթի, յունիսի 3-ին Հայ երիտա-
սարգ թատրոնատեների խումբը պ. Տէր-Նաւ-
թեանի մասնակցութեամբ գերմանական կը-
րում տուեց մի ներկայացումն յօգուտ Արա-
րատեան ընկերութեան: Ներկայացումն էին
«Երկուսն էլ քաղաք են», երկուսն էլ փող
չունեցող, իսկ էլ քիչ մօղջութիւնով Հեղ-
հանգ. Տէր-Պրիգորեանի և Զաւենտ:

Թատրոնի գնալու ժամանակ մենք դիտա-
ւորութիւն չունեցինք առանձին քննութիւն
գրել այդ ներկայացման մասին ի նկատի ու-
նենալով թատրոնատեների հասակը, նպա-
տակը և նրանց գործի անձանց լինելը, բայց
այդ երեկոյնս խաղը մեզ վրա այնպիսի
լաւ տպաւորութիւն գործեց, որ մենք չենք
կարող մի քանի տող չը նուիրել երիտասարդ-
ներին գովելու համար:

Ինչպէս ընթերցողը տեսնում է ներկայա-
ցումը պիտեմք, բայց զանաւոր շատ ան-
գամ ներկայացում գրվածքներ են, բայց
թատրոնատեները այնքան կենդանի խաղացին
որ ոչ ոքի չը ձանձրացրէր մի քանի անգամ
տեսած բանը դարձեալ տեսնել:

Մասնացոյց չենք անում այս ինչ կամ այն
ինչ խաղացողի վրա, առանձնապէս ոչ ոքի
խաղը աչքի չէր ընկնում, բայց ամբողջու-
թիւնը շատ գեղեցիկ էր և այդպէս էլ պէտք
է լինի:

Այս երեկոյցը շատ քիչ է պատահել դե-
րասանների ներկայացման ժամանակ: Վերջին-
ների ներկայացումներին միշտ մէկի կամ եր-
կուսի խումբ շատ լաւ է եղել, իսկ ամբողջ-
ութիւնը վատ: Սա մեծ պակասութիւն է:
«Զաւենտը» ներկային բոլորովին համապա-
տասխան էր: Հասարակութիւնը առաջին
անգամ լսեց Հայոց թատրոնի բեմից մի քանի
ցաւալի լուրեր թիւրքահայատակ Հայ թշու-
ւառների մասին: Ամեն մի խօսք, որ արտա-
սանկում էր հայերի վերաբերութեամբ, հա-
սարակութիւնը ընդունում էր ոգևորված
ծափահարութիւններով: Մասնաւոր պ. Ն. Ն.
(Վահան Արծրունու) կարգաւ շատ լաւ տը-
պաւորութիւն գործեց հասարակութեան վրա:
Ներկայացման միակ պակասութիւնը այն էր,
որ պ. Տէր-Նաւթեանը վատ կարգաց «Մի
պատկեր» հեղ. Գր. Արծրունու:

Մի քանի խօսք էլ ձեռք էլ քիչ մօղջութե-
ան, մասին և մեր յօգուտը վերջացած
էր լինի: Այն ժամանակից, որ այդ պիտեմք
խաղացվում է, այսպէս լաւ չէ կատարված:
Ամեն մի խօսք, ամեն մի շարժումը իր
տեղն էր և մենք վերջապէս տեսնեց իրար
դուր հանգ. Մ. Տէր-Պրիգորեանից գրվածքը
այնպէս ներկայացրած, ինչպէս նրան ստեղ-
ծել է հանգուցելով:

Նկատելու մասին երեւի թատրոնատեները
տեղեկութիւն կը տան հասարակութեանը:
Օր. Ա. Ն. Ա.

(Գ) ԸԸ — ԸԸ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 10 յունիսի

Յունիսի 8-ին գերմանական կըրքի դահլիճում
յօգուտ Արարատեան ընկերութեան մեր տուած
ներկայացումից 240 ռուբլ. եկամուտ ունեցանք:
Եթէ այդ գումարից վերցնենք 140 ռուբլ. մեր
ունեցած զանազան ծախսերի համար, կը մնայ
100 ռուբլ. յօգուտ ընկերութեան: Վարժարանի:
Յանձնելով ձեռք այդ գումարը, պատուելի պա-
րոն, խնդրում ենք հասցնել ուր հարկն է: Օգուտ
ենք քաղում դէպքից մեր շնորհակալութիւնը
յայտնելու թէ Թիֆլիսի հասարակութեան այն
մասին, որ այնքան մեր թող ներկայացումն և
թէ տ. Մեկը-Նուբարեանին և պ. Տէր-Նաւ-
թեանին, որոնցից առաջինը չը նայելով նախա-
պաշարմունքներին մասնակցեց մեր ներկայա-
ցմանը, իսկ երկրորդը օգնեց թէ իր խաղով և
թէ զանազան խորհուրդներով:

Ընդունեցէք և այլն.

Ուսանողներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խմբագրութեանց անկախ պատճառներով «Մը-
շակի» ներկայ համարը հրատարակում ենք կէս
թերթի չափով:

«Մշակի» անցեալ համարի հետ ուղարկեցինք
մեր բոլոր բաժանորդներին «կէս տարվայ օրա-
ցոյց» որի վերջում կայ մի յայտարարութիւն պ.
Պէշիցկու ընթացիկ «ուսումնարանի» համար
Մօսկվայում: Հասանելի ուղարկելով իրանց որդ-
կերանց: Ուսումնարանի մայրաքաղաքներից մե-
կում չը գիտեն ի՞նչ գիտեն որ պատրաստել տան
իրանց որդիկանց այս ինչ կամ այն ինչ ու-
սումնարան տալու համար: Իսկ այժմ, ինչպէս
մեզ յայտնում են Պ. Պէշիցկու ուսումնարանը
ամենալաւ ուսումնարանն է Մօսկվայում բազմա-
րուստեան և այլ ուսումնարաններ պատրաս-
տելու համար:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են, որ Սողան-
լուի և Դաւթի փոստացին կայարանների մէջ
եղած ամբողջ տարածութեան վրայ մօրեկը ոչն-
չացնում է արտերը: Մօրեկը մէկ արտից անց-
նում է միւսին:

Հարաւ գիշեր յունիսի 10-ին կայծակ ընկա-
ւորաբայի տան առաջ, բուլվարի վրա: Կայծակը
սպանեց մի մարդ, միւսը միայն ուշաթափ
եղաւ և մի քանի ժամանակից յետոյ կարողա-
ցաւ գնալ իր տուն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՈՒՏԵՐԻ ԴԱՐԵՂԱՐՁԸ

(Հարունակութիւն և վերջ)

«Յեղափոխութեան» տառը, ժողովուրդը
ցածր էր գտնվում: Ժողովուրդի վրա էր կղե-
րակնութիւնը, դատաւորութիւնը: Ի՞նչ էր
այն ժամանակի ժողովուրդը, — տգիտութիւն.
Ի՞նչ էր այն կրօնը, — անհերքութիւն. Ի՞նչ
էր այն ժամանակի արդարութիւնը, — անի-
րաւութիւն: Եւ իմ խօսքերին վրայ կը բերվում
երկու իրողութիւններ:

«1761 թ. հոկտեմբերի 13-ին, Տուրուզ-
քաղաքում, գտնվում են մէկ տան մէջ մէկ երի-
տասարդ կախված: Այդ անձնատպանութիւն
էր. իբրեւ մարդասպանութիւն նկատեցին նը-
րան. և ում մեղադրեցին, իր հօրը: Դատա-
ւորները աշխատում են և ահա այս է լինում
նրանց աշխատութեան հետեւները: 1762 թ.

մարտ ամսում, Կալա 1) տարվում է մի հա-
սարակաց հրապարակ: Երեք մարդիկ կան
գլխատութեան բեմի վրա. մի կապիտուլ (քա-
ղաքային դատաւոր) որի պաշտօնն է վերա-
կացութիւն անել տանջանքին, մի քահանայ որ
բռնում է մի խաչելութիւն. գահին՝ երկա-
թի գաւազանը ձեռքին: Դահլիճը բարձրաց-
նում է գաւազանը, և թեւը խորտակում է
դատաւարութիւնը որ ուշքից ընկնում է. նրան
ուշքի են բերում և նորից սկսում են տան-
ջել: Վերջապէս, գահինը տալիս է նրան գը-
թութեան հարուածը: Այդ տանջանքը երկու
ժամ էր տեւել. մի մարդասպանութիւն էր
գործվել: Ո՞վ էր գործել? — դատաւորները:

«Մի այլ եղելութիւն: Մերոնուց յետոյ,
անցնեց երիտասարդին 1765 թ. Ապրիլ-
վրում մի գիշեր փոթորիկ և սաստիկ քամի
է լինում: Հետեւեալ օր գետնից ժողովում են
փողոցի սալայատակի (տրոտուար) վրա, փը-
տած փայտից մի հին խաչ: Ո՞վ է վայր գցել
այդ խաչելութիւնը: Ոչ ոք չը գիտէ. թերեւ
մի անցորդ. թերեւ քամին: Ամիսնի եպիս-
կոպոսը մի յորդորական թուղթ է հանում.
մարդասպանութեան յորդոր որ կրօնամոլու-
թիւնը տալիս է տգիտութեան: Դատաւորները
գտնում են, կամ կարծում են գտած լինել
թէ այն գիշեր որ խաչելութիւնը վայր ըն-
կած էր, երկու երիտասարդ օֆիցերներ,
Լաբար 2) և Էտալոնը անց են կացել
այն կամուրջից ուր կանգնված էր խաչելու-
թիւնը. թէ նրանք արեւած են եղել և երգել
են պահպան զօրքերի երգեր: Դատաւորնե-
րը վճռում են երկուսն էլ ձերբակալել: Դէտա-
լոնի փախչում է, Լաբարը բռնվում է: Նա
հերքում է թէ կամուրջից անց է կացել: Խոս-
տովանում է թէ այն երգը երգած է: Արքե-
վիշի դատարանը դատաւարտում է նրան:
Լաբարը բողբոջում է: Փարիզում, նոյն վճիռը
հաստատվում է: Սարափելի ժամը հասնում
է. Լաբարը ասպետին ենթարկում են օրէնք
դառած: ապօրինաւոր տանջանքին: Զարչա-
րանքի ժամանակ խորտակում են նրա մէկ
ծունկը: Հետեւեալ օր, 1766-ի յունիսի 5-ին,
քաջքաշ տանում են Լաբարին: Արքեվիշի
հրապարակը կտրում են նրա ձեռքը, բերնիցը
դուրս են քաշում լեզուն, կտրում են գլուխը
և ձգում են նրա մարմինը այրելու փայտա-
կոյտի մէջ: Նա 19 տարեկան էր: Այն ժա-
մանակ ո՞վ Վօլտէր, դու ստեղծում աղաղակ
բարձրացրիր. այդ աղաղակը կը լինի քո յա-
ւիտենական փառքը: Այն ժամանակ զու-
սկեցիր այն ստեղծել դատը անցեալի դէմ:
Մեծ մարդ, յաւիտեան օրհնված լինի:

1) Կալա Տուրուզի մի վաճառական էր,
կրօնով բողբոջական: Երբ օրդինարացիք մէկը
խեղդված գտնեցին իր տան մէջ. թշնամիները
լուր տարածեցին թէ այդ երիտասարդը թողել է
բողբոջականութիւնը և հայրն էլ սպանել է նրան:
Այդ խօսքը թէպէտ անհիմն էր, բայց Տուրուզի
դատաւարական ժողովը ընդունել և դատաւար-
տել է խեղճ Կալային, որին սպանեցին ստեղծել
տանջանքներով: Վօլտէր լսելով այդ երկու թիւնը,
գործի հանգամանքների հետ ծանօթացաւ, վե-
րաքննութիւն պահանջեց դատարանից և իրան
աջողվեցաւ մի վճիռ ստանալ: օրով արգարացրեց
Կալայի յիշատակը, նրա սպանվելուց երեք տարի
յետոյ:

2) Լաբար ասպետը, որ մի երիտասարդ ու-
սանող էր, հաղեւ 19 տարեկան, Արքեվիշի դա-
տարանից դատաւարտվեցաւ ողջ ողջ արվելու:
Նրա վրա դրապարտած էին թէ մի խաչելութիւն
խորտակած է: Փարիզի դատարանը որին դիմեց
Լաբար, իբրեւ թէ զթալով նրան, չնորհ արաւ որ
գլխատելու առաջ քան թէ այրելը: Վօլտէրի Dic-
tionnaire philosophique (փիլիսոփայական բառա-
րան) որ նրա ամբարշտութեան պատճառ էին
կարծում, այրեցին իր մարմին հետ:

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ա մեն լեղ ու ու:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ

«Պարոններ, այս ստեղծել բաները կատար-
վում են քաղաքավարի, ուրախ, զգուսեք
մի ընկերութեան մէջ: Թուղթեան անտար-
բերութիւնը դառնում էր անգղայական ան-
հոգութիւն: Սէստ. Օլէր, Բուֆլէր, Ժանտի-
Բերնար գեղեցիկ ոտանաւորներ էին գը-
րում: Վերսայլ փայլում էր ճառագայթներով
արեւի նման, Փարիզը անգիտանում էր, և այդ
միջոցին, դատաւորները չարարում էին մի
ծերունու, քահանաները խլում արմատից
հանում էին լեզուն մի երեխայի բերանից մի
երգի համար: Այդ փոփոխամիտ և ցաւալի
ընկերութեան մէջ, Վօլտէր միայն, ունեւոր-
վի աչքի առջև բոլոր այդ միացած ուժերը,
արքունիքը, ազնուականութիւնը, հարստու-
թիւնը, և այն անգիտակցաւոր հետեւող (in-
conscient) իշխանութիւնը, կոյր ամբողջ
այն ժամանակի ստեղծել դատաւորութիւնը,
որ այնչափ ծանրանում էր իր ենթակաների
վրա և այնչափ հյուս էր իր տէրի առջև,
ձնող և նոյն ժամանակ չողորթնող, ժողո-
վրի գլխի վրա ծնւագրած թագաւորի առջև,
այն կեղծաւորութիւնից և կրօնականութիւնից
բաղադրված կերականութիւնը, Վօլտէր,
կրկնում էր, մենակ, պատերազմ հրատարա-
կեց ընկերական բոլոր ամբարշտութիւնների
այդ դաշնակցութեան դէմ, այն ստեղծել և
ահաւոր օրակին, և ընդունեց ձախառանաւոր:
Եւ ի՞նչ էր իր գէնքը. այն որ քամու նման
թեթեւ, շանթի նման զօրաւոր է, մի գրիչ:
Այդ գրիչով կաւեց, այդ գրիչով յաղկեց:
Յետոյ մի հայեացք ձգելով այն մեծ գործի
վրա որ Վօլտէրի մօտ կատարեցին Բուսսօ,
Դիդրօ, Դէյլաւեր, պ. Վիկտոր Հիւգօն ա-
սում է:

«Մարդերի տնտեսներով դարեւ կենդանաց-
նել, այդ տրված է միայն երեք ժողովրդի. Թու-
նաստան, Իսլամայի, Ժրանիսայի: Ասում են
Պերիկլէսի գաղը, Օգոստոսի դարը, Աւստ. X-ի
դարը, Լուդովիկոս XIV-ի դարը, ասում են
Վօլտէրի դարը: Մինչև Վօլտէր, դրանք տե-
րութեան գլխաւոր մարդերի անուններ են.
Վօլտէր աւելի է, դադարեցնելի պարագլուխ
է նա: Մարդիկ գրում են որ այսուհետեւ կա-
ռավարող բարձր իշխանութիւնը կը լինի
խելքը: Այդ այն օրինաւոր իշխանութիւնն
է որ փոխակերպվել, ազատութեան ձեւն է
առել: Մի օրէնք միայն կայ որ է խիղճը: Սը-
րանք են առաջադիմութեան երկու երեւոյթ-
ները. գործածել իր իրաւունքը որ նշանա-
կում է մարդ լինել, կատարել իր պարտաւո-
րութիւնը որ նշանակում է քաղաքացի լինել:
Պ. Վիկտոր Հիւգօն այսպէս վերջացրել է
իր խօսքը:

«Ռաւանք գէպի այս մեծ մեռեալը, այս
մեծ կենդանին, այս մեծ ոգին: Թոնարհվեց
պատկառելի գերեզմանի առջև: Թորհուրդ
հարցնեց նրան որի մարդկութեան օգտակար
կենքը հարկը տարի է որ հանգած է, բայց
իր գործը անմահ է: Թորհուրդ հարցնեց
այլ մեծ մտածողներին, այդ փառաւոր
Վօլտէրի օգնականներին. Ժան-Փակին, Դի-
դրօին, Մօնտէքիէին: Խօսել տանք այդ
մեծ ձայններին: Դարաբեցները մարդկային
արիւնհոգութիւնը: Բաւական է, բաւական,
բաւական: Ահ, բարբարոսութիւնը դեռ
մնում է. թող ուրեմն բողբոջ փիլիսոփայու-
թիւնը: Կատարել թուր դեռ փայլում է.
թող իր բարկութիւնը ցոյց տայ քաղաքա-
կրթութիւնը: Թող տես և ութերորդ դարը

